

ղեցիկ միտք են յղացել — Պրեմանտի դազադը ուսերին առած հողին յանձնել, (այս սովորութիւնը Ֆրանսիայում գոյութիւն չունի): Պատկներ են եղել՝ Պօղոս-փաշայից, Ֆրանսիայի հայ գաղութից, խմբակցութիւններից և ինքնադման թափօրին, բացի ուսանողներից ներկայ էին բազմաթիւ հայեր, հոգևոր հովիւ Տէր Վստմապուհ քահանայ, Պօղոս Նուբար փաշան, դօքտ. Լորիս Մելիքեանը և ինքնաբարզանք Պրեսանտի, այդ մարգատէր և բարի ծերունու թարմ յիշատակին:

Մ. Մ.

# ԲԺՇԿԱՊԵՏ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Անցեալ զեկտեմբեր 25-ին Պարիզում վախճանուեց հայ հասարակութեան յայտնի բժկ. Աւետիք Բարայեանը 70 տարեկան հասակում: Նա բնիկ Ալէքսանդրապոլցի է, իւր բարձրագոյն ուսումը ստացել է Պետերբուրգի զինուորական-բժշկական ճեմարանում: Եղել է զինուորական ծառայութեան մէջ, մասնակցել է ռուս-թուրքական պատերազմում և ապա զինուորական բժշկի պաշտօնով երկար ժամանակ եղել է Աբասթուանում և Թիֆլիսում: Վերջերս մասնաւոր կերպով բժշկութիւն էր անում Թիֆլիսում և հանքային ջրերում՝ ամառները: Նա համարում էր ճշմարիտ թուականների հարազատ զաւակներից և իւր արտացառ գործունէութեամբ միշտ օգտակար է եղել հայութեան զանազան գործերում: Նա թողել է բաւականին ձեռագիր կարեւոր աշխատանքներ, մասնաւոր բժշկական խնդիրների վերաբերեալ, իսկ տպագրուածներից աչքի են ընկնում նորա հետեւեալ աշխատանքները:

1) «Ուսումնարանների առողջապահութեան հարցեր», 1881 թ.

2) «Մանկապարտէզների կամ Պրեօբէլեան ծաղկանոցի առողջապահութիւնը» 1882 թ.

3) Արդի ուղղութիւն առողջապահութեան և բժշկականութեան մէջ 1886 թ.

1813  
70  
43  
69  
-43  
26

4) Բարակացաւ թորախոր և նորա տարածման առաջն առնելու միջոցներ», 1899 թ.

5) «Ինֆլուէնցա» 1904 թ.

6) «Եկեղեցական առողջաբանութիւն» 1909 թ.

7) «Նոյնը՝ զիրք Բ. 1911 թ.

Անհրաժեշտ ենք համարում «Արարատի» բնթերցողներին ծանօթացնել այն մի շարք եկեղեցական առողջապահական խնդիրներին, որ հանգուցեալ բժշկապետը իւր յիշեալ «Եկեղեցական առողջաբանութիւն» գրքի մէջ արծարծում է և որոնք յիրաւի այժմէականութեան նշանակութիւն ունին և իրենց գրական լուծումն են սպասում մօտիկ ապագայում:

Հանգուցեալ բժշկապետը իւր «Եկեղեցական առողջաբանութիւն» գրքի Ա. մասն ուղարկել էր Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսին: Հանգուցեալ կաթողիկոսն կարգալով այդ հետաքրքրական գիրքը իւր կարծիքն էր գրել բժշկապետին: Վերջինս իւր նոյն գրքի Բ. պրակում հրատարակում է Վեհափառ Մատթէոս Բ ի կարծիքը՝ որն և առաջ ենք բերում այստեղ:

«Ձեր... «Եկեղեցական առողջաբանութիւն» անուն աշխատութիւնը ստացայ և ուշադիր հետեւեցայ ձեր աշխատութեան ամէն մէկ տողին: Անվիճելի ճշմարտութիւն մըն է այսօր թէ՛ սխալ ըմբռնուած քաղաքակրթութիւնը մէկ կողմէն, տգիտութիւնը, քարացած սովորութիւններն և նախապաշարումներն միւս կողմէ բարոյից անկման, կրից անզսպութեան տեղի տուած՝ շարք մը տարափոխիկ հիւսանդութիւններ, մտնաւանդ վատ ախտը զոգցես փայփանքով կրանցանեն և ահռելիօրէն կը տարածեն: Գիտական աշխատանքն այս ողբալի վիճակին ի դարման, մանաւանդ այնքան ախտատարած մանրէներու զոյութեան հաստատուելէն ի վեր, առողջապահիկ պայմանները մեծ խնամքով կը մշակէ՝ մարդկային սեօը ալլասերում է, ֆիզիքական քայքայում է և նոյն իսկ տարածած մահուանէ փրկելու համար»:

«Առողջաբանական գիտութեան և առողջապահիկ

պայմաններու շարքէն դուրս պէտք չէր մնար և եկեղեցական առողջաբանութիւնը: Ասի մշակելու առաջնութեան պատիւը: ... Ձեզ կը պատկանի, ինչ որ մեծ և կարևոր պակաս մը կրկեցնէ մեր այնքան խնամքի կարօտ կեանքին մէջ: Կը շնորհակտութեամբ ձեզ և ամեն յաջողութիւն կը մաղթեմ:

Այդ նախաբանից յետոյ հանգուցեալ Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսն մի առ մի թուում է «Եկեղեցական առողջաբանութիւն» գրքի մէջ արծարծուած այն բարեփոխութիւնները, որոնք ըստ հայեցողութեան հանգուցեալ կաթողիկոսի կարող են զոգծագրուել այժմեանից:

Ահա այդ կէտերը.

- 1) Եկեղեցիներում նստարաններ և տխուր ժողովրդի համար դնելը.
- 2) Եկեղեցական երաժշտութեան կարգաւորումը.
- 3) Եկեղեցիների մէջ օգափոխիչ գործիք հաստատելը.
- 4) Ձմեռային ժամանակ եկեղեցիների ջեռացումը (տաքացնելը).
- 5) Ախտաւարակ երկսեռ անձանց մինչև առողջանալը պսակման արգելքը.
- 6) Կիսազնի և դրամոփախ ջնջումը.
- 7) Պահեցողութեան կամ պատի առողջաբանական տեսակէտով էլ բացատրուիլը.
- 8) Ծննդական մայրերի 8—9 օրից անկողնից ելնելը և «քառասունքի» պահեցողութիւնը.
- 9) Գերեզմաններ ծառազարդիլը.
- 10) Գերեզմանների շուրջը ծառաստանով թումբ շինելը.
- 11) Ննջեցելոց մարմինների լուացքն առողջապահիկ պայմանաց համաձայն կատարելը.
- 12) Ննջեցելոց թաղումը երեք օրով յետաձգելը.
- 13) Բարեւական և մեռելահամբոյրի ջնջումը.
- 14) Մեռելահացի՝ քելեխի ջնջումը.
- 15) Ննջեցելոց երեսկալի և նրա յարակից կառուեղէնների ջնջումը կամ ապանեխման (դէղինժէկցիայի) ենթարկելը.
- 16) Մեռելական մետաղեայ ինչպէս և շինծու ծաղիկներով (որոնք պահուում են ուրիշների էլ գործածելու համար) պսակներ դնելու նորամուտ սովորութեան աւելորդութիւնը և փրասները ժողովրդի համար.
- 17) Ննջեցեալները դադարակալով՝ փոխանակ ուսերի վրայ՝ գերեզման փոխադրելը.
- 18) Միևնոյն մեռելադագաղի հասարակաց գործածութեան համար ամեն անգամ ապանեխման ենթարկելու կարիքը.

19) Մեռելաթաղ քահանայից կառքով գերեզման գնալու թոյլառութիւնը:

«Այս եւ ասոնց նման կէտեր կամ բարեփոխումները Հայաստանեայց եկեղեցւոյ հայեացքով կանոնական արգելք մը չունին եւ կրնան այժմէն զործադրուիլ տասինանաբար՝ ուր որ յարմարութիւն եւ միջոցներ կան»:

Հանդուցեալ կաթողիկոսն դէմ չէ եւ էլեքտրական կանթեղներով լուսաւորել եկեղեցիները, ինչպէս որ ինքը թոյլատրել է Սիմֆերոպոլի եկեղեցում:

Այնուհետեւ հանդուցեալ հայրապետն առաջ է բերում հետեւեալ կէտերը, որոնք նոյնպէս առողջապահական տեսակետով բարեփոխելու կարիք ունեն՝ բայց աւելի ծանր խնդիրներ են:

1) Դիակիզումը. 2) Ս. Հաղորդութեան մասնակցելու մատակարարութեան եղանակի փոփոխութիւնը. 3) Կուսակիօնութեան եւ քահանայից կրկնամուսնութեան խնդիրները. 4) Փեսացու եւ հարսնացու անձանց ճշտութեամբ տարիքին որոշումը. 5) Ազգակցական, խնամեական եւ կնքահայրական ճիւղահամարի փոփոխութեան խնդիրները. 6) Ամուսնալուծման խնդիրը կանոնական սահմաններով ընդլայնելը:

«Այս եւ այլ ասոնց յարակից առողջաբանական պահանջները, որոնց մէջ ուշադրութեան արժանի աւելի ծանր խնդիրներ ալ կան, Հայաստանեայց ընդհանուր եկեղեցւոյ իրաւասութեան կը վերաբերին: Այս կարգի խնդիրները բարեփոխելու, լուծելու եւ ի նորոյ կանոնելու հեղինակութիւնը՝ Հայաստանեայց ընդհանուր համազգային եկեղեցական ժողովին կրպատկանի:

«Քաջ գիտէք արդէն, թէ միայն քաղաքական տիրող հանգամանաց եւ պատճառներուն հետեանօք՝ 6 դարէ ի վեր կարելի եղած չէ համազգային եկեղեցական ժողով գումարելու: Այս ժողովի գումարման պէտքը սակայն այլեւս անհրաժեշտ դարձած է. ուստի թուրքիոյ հայոց արդի կացութիւնը աստիճան մը անդորրանալէ եւ Ռուսիոյ հայոց կարգ մը խնդիրներ յարդարուելէ յետոյ՝ պիտի ձեռ-

նարկինք այդ ընդհանուր եկեղեցական ժողովի գումարման գործին: Կը յուսամ թէ յաջողինք:»

Ապա հանգուցեալ Կաթողիկոսն այս ամենից յետոյ իւր առ բժշկապետն գրած՝ նամակի վերջում ասում է. «Նուիրական պարտ կը համարեմ այժմէն հաստատապէս յայտնել և յայտարարել, թէ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնն ու վարդապետութիւնն ամեն պարագայի մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ անպայման կը պահանջէ անսօ գոյութեան և ինքնուրոյնութեան անխախտ պահպանման բացարձակ պէտքը:»

Հանգուցեան բժշկապետ Բաբայեանի եկեղեցական առողջարանութեան գրքի մէջ առաջ բերած և հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթողիկոսի կողմից քննութեան ենթարկուած խնդիրներն անշուշտ յուրջ ուշադրութեան արժանի են և կարելի է հետզհետէ մեր եկեղեցիներում իրականացնել առանց դժուարութեան և առանց ամենափոքր չափով դիպչելու եկեղեցու դաւանութեան: Իսկապէս առողջապահական տեսակէտից հնում այդ խնդիրները չեն ենթարկուել գիտողութեան. իսկ այժմ երբ բժշկականութիւնը ստեղծել է աչքի ընկնող գրականութիւն առողջապահական խնդիրների վերաբերեալ երբ ժողովրդի բազմաթիւութեան հետ և առաջ է գնում այդ խնդիրների իրականացման պահանջ՝ ինչո՞ւ ևս եկեղեցին չպէտք է կանխի և կարեւոր խնդիրներին լուծումն տայ առողջապահական տեսակէտից ժամանակակից պահանջների համաձայն: Ինչո՞ւ Պօլսի հայոց մայր եկեղեցւում Լիմերիկայի հայոց եկեղեցիներում և այլ տեղեր ժողովրդի համար նստարաններ կան դրուած՝ իսկ մեզանում արդիւնուած է: Ինչո՞ւ չպէտքէ առանձին հոգատարութեան խնդիր դառնայ եկեղեցական երաժշտութեան կարգաւորումն: Չէ՞ որ մեծ չափով կաւելանայ եկեղեցի յաճախողների թիւը, եթէ եկեղեցիներում կանոնաւոր երաժշտութիւն լինի: Ո՛րքան մեծ առնչութիւն ունի զգացմունքով ու ջերմեռանդ աղօթքը ներդաշնակ դեղեցիկ երաժշտութեան ու երգեցողութեան հետ, որոնք միաժամանակ և նպաստում

են աղօթողների բարքերի մեղմացման և ազդում առողջութեան վրայ\*)։ Այսպէս և միւս վերեւ յիշատակուած խնդիրների մասին կարելի է ասել։ Անհրաժեշտ է այս խնդիրների լուսաբանութեան նուիրուած յօդուածներ գետեղել պարբերական մամուլում։ «Արարատն» քւարախութեամբ կը հիւրընկալէ այդ տեսակ յօդուածներ, որպէսզի հետզհետէ լուսաբանելով, կարելի լինի Հոգեոր բարձր Տիրջ բարեհաճ թողլուութեամբ իրազործել վերեւ առաջ բերած կարևոր խնդիրները սկզբունք ընդունելով մեր Հայրապետներից աւանդ մնացած խօսքերը՝ «Հայապետանայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնն ու վարդապետութիւնն ամեն պարագայի մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչո՞ւ անպայման պահանջում է նորա գոյութեան եւ ինքնուրոյնութեան անխախտ պահպանման բացարձակ պէտքը»։ Իսկ ինչ որ դուրս է եկեղեցու դաւանութիւնից և վարդապետութիւնից և վարչական, ծիսական բնոյթ ունեն միշտ կարող են ենթարկուել փոփոխութեան համաձայն ժամանակակից և տեղական պահանջների ու յարմարութիւնների։

Ներկայումս Կ Պօլսի Ամենապատիւ Պատրիարքն և Կրօնական Ժողովն եկեղեցական բարեկարգութեան խնդրի առթիւ կարգել են առանձին Յանձնաժողով և այս մասին խնդրել Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսից հրահանգուած թիւն «Ա» ի գծել զուգրութիւն զործունէութեան նորին ի վարչական, ի ծիսական և ի կանոնական մասունքս... «Անփոփոխ պահելով զվարդապետութիւն և զհաւատալեաց ճշմարտութիւն Առաքելական ս. եկեղեցւոյս»։

Բարգէն վարդապետ



\*) Տես նոյն բժշկապետ Բարայանի յօդուածը Տարազի 1913 թ. գեկտեմբեր համարում։